

— Դու այստեղ նսաւ, ես հիմա կ'ուզամ եւ հաշիւդ կը տեսնեմ:

Այս ըսելով վեց թիակով նաւակը մտաւ եւ քանի մը վայրկեանէն ելաւ ցռկանայ վին վրայ, ուր Ռշտունին նստած այս նոր Բաբելոնին այս երկրորդ անգամ կը նայէր, երբ ահա իւր բարեկամ եւ անուանակիցը վազելով գիրկը դիմեց, եւ հրամայեց, որ նաւուն դարբինը գա շղթայները հանէ, որ նախատինք էին ոչ հայոց իշխանին, այլ նորա բարեկամաց:

Երբ պալատը դարձան մեր երկու Թեոդորոսք, Ռշտունուոյն առաջի գործը եղաւ երկու հարիւր քիւզանդական ոսկին վճարել տալ արծաթասէր զինուորին, եւ յետոյ այս խօսակցութիւնը տեղի ունեցաւ երկու բարեկամաց մէջ. Երիզացին կ'ըսէր Ռշտունուոյն.

— Շատ կը ցավիմ, որ իմ պատճառաւ դու վստահացեր ես այդ անզգամ Թումայի, բայց լաւ ժամանակի կը հասնիս քաղաքս, վասնզի քեզ պէս քաջի մը պէտք ,ունինք այս վայրկենիս:

— Ի՞նչ կը նշանակէ այս խօսքը:

— Այն կը նշանակէ, որ կայսրը տասնվեց տարու պատանի մ'է, առաջին օրերը, երբ գահը նստաւ, Փիլակրիոսի ազդեցութիւնն էր, որ կը կառավարէր, բայց քիչ-քիչ Վաղէնտիոս, որ զինուորականաց գլուխն էր՝ զօրաց թիւը շատցուց, այնպիսի բռնաւորական ձեւ մը առաւ, որ կայսեր դեմառդեմ հրամայական կերպեր սկսաւ գործածել եւ այս օրերը շատ կասկած կայ, որ յայտնի ապստամբութեան դրօշ բարձրացնելով՝ ինքզինք կայսր հրատարակել նաեւ յանդգնի:

— Ինչչա՞րի զօրք ունի այդ մարդը այդպիսի մեծ գործի ձեռնարկելու համար:

— Երբ Մարտինէ եւ իր որդին գահազուրկ եղան եւ գործելու գլուխը այս Վաղէնտիոսն էր՝ 3000 սպառազինաց խումբ մը կար ի ձեռին:

— Երեք հազար հոգուով դուք կայսր մը կը դնէք եւ կ'իջեցնէք: Գեղեցի՛կ ելեւեջ:

— Բայց այդ երեք հազար հոգուոյ քամակին կան ծերակոյտը...

— Անարգ պալատականաց խումբ, որ միշտ յաջողութեան երկրպագու է:

— Այո՛, բայց կայ նաեւ ժողովուրդը, որ...